ՈՒՐԲԱԹ 8 ՄԱՅԻՍԻ 1881 № 80

№ 80 ՈՒՐԲՇԹ 8 ՄԱՅԻՍԻ 1881

ՄԵՂՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՍԱՆԵԻԶՈՐՈՐԴ ՏԱՐԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տոն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետոյ։

Յօդուածագրութիւր դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. *Въ редакцію газеты «Мегу Айастани», въ Тифлисѣ*, կամ Rédaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

Խմբագրութեան ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ գրուած լինեն գրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։
Յայտարարութիւնները ընդունվում են խմբագրատանը եւ պ. Բ. Շահվերդեանի պաւիլիոնում։
Յայտարարութիւնները ընդունւում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Հայ եկեղեցական անձի բացակայութիւնը Մցխէթում։
Ազգային.— Թղթակցութիւնք վանից և երևանից։
Քաղաքական. — Կալուածական լոզունգը Իրլանդիայում։ — Քաղաքական լուրեր։
«Մեղուի» հեռագիրները։
Ներքին լուրեր։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ։
Բանասիրական. — Շրջառութիւն Գևղէանի անտառապահութեան տեղերի։

ԹԻՖԼԻՋ, 8 ՄԱՅԻՍԻ 1881 Թ.

Մենք «Մեղուի» մէջ յայտնեցինք այն դաղափարը թէ մեր եկեղեցական վարչութեան կենդրոնը գործադրելու և նորա ազդեցութիւնն ամրացնելու համար հարկաւոր է վճռական իշխանութեանց իրաւասութիւնն ընդարձակել, և՛ պարտականութիւնք նորա վերայ դնելով, որովհետև կենդրոնն անկարող է անձամբ ամենուրեք գտանվելու և ազգի կամ որ եկող տարին ուսումը սկսվի։ Ուսման պահանջը արդէն զգացուել է ամեն հայոց գիւղում։

Շատերը պարապում են պարտիզպանութեամբ և հողագործութիւնով, որ ընդհանրապէս նոցա կենդանութեան աղբիւր է։ Հողի պակասութիւնը զգալի է։ Ինձ ասացին՝ որ կանայք շատ հմուտ են մանելու մէջ և շատ ճարպիկ են չալեր գործելում, որ սովորական զգեստ գիւղական համար։ Թուրքերի կանայք բացառապէս գործում են կապերանները, բայց սրանք զիմացկուն չեն և չեն կարող մրցել Շուշիի կապերանների հետ։ Հայ կանայք գիւղիս այս բանում կարեւոր յաջողութիւն չ'ունին։

Անտառապահութիւնը, մանաւանդ եղջիւրաւոր կենդանիներինը, չի տարածուած առաւելապէս հողի պակասութեան համար և մանաւորապէս նորա համար, որ թուրք աղգալնակութեան դաղութիւնը դադար չէ տալիս խնդմ աշխատասէր գիւղացիներին, որ միշտ և միշտ քրտինք են թափում արտերից մէջ։ Նկատելի այն է հայոց չինականոց մէջ, որ ունեցր մարդիկ, կամ նոքա, որ փոքր թէ չատ հարստութեան տէր են դառնում, մողնում, գնում հեռանում են իւրեանց ծննդեան տեղերից և ապրում են քաղաքներում և մանաւանդ տեղափոխուում են Թիֆլիս, ուր և հաստատում են, եթէ յաջողում է գործը, իւրեանց տուն ու տեղը։ Այս օրինակով գիւղը մի կողմից զրկվում է հարուստ և մտածող մարդերից և միւս կողմանէ զրկվում է այն օգուտից, որ կարող էին ունենալ գնացողների գործունէութիւնից։ Բայց առաւել վնասակարն այն է, որ գիւղական հասարակութիւնը չը գտնելով իր մէջ զրադէտ և փոքր թէ չատ լուսաւորուած մարդ, ասպարէզ է բացանում բախտախնդիր մարդոց համար, որոնք դանազան հնարներով տանուտէրի պաշտօն ձեռք ձգելով, առաւել զնաս քան թէ օգուտ են բերում հասարակութեան և ընդհանուր գործին։

Այս այսպէս լինելը ոչորի համար գաղտնի չէ և ով միանդամ ուշադրութեամբ գիտել նշմարել է տանուտէրների ընտրողութեան եղանակը, այնպիսին կը խոստովանի, որ վնասը այն ժամանակը մեծն կարող է վերանալ, երբ գիւղացոց մէջ կը գտնվին հասարակութեան գործերին ցաւակիցներ։

Բարեկրթ. Սնոքարան մեզ հիւրընկալող Մինասեանցին, որ ինչպէս երեսում էր հարուստներից մէկն է գիւղում, բարձրացրեց սարերի կատարը կանչեց երեխաներ։

Ծառներով Մ ե ղ ի ք գ ի ւ ղ անուն հայոց գիւղն, որ ունի 32 տուն, անհնարին էր չ'զգալ գեղեցիկ անուշահոտութիւն վայրի վարդերից և զանազան ուրիշ խոտերից, որ գոյն գոյն փունջեր էին կազմում դաշտի մէջ։ Բոլոր մարզագետինը և ընդհանրապէս շրջանակը խոպանը ծաղկանոց էր, որ հազար տեսակ փոփոխվում է։

Ինքը գիւղը կարծես թէ փաթաթուել է թուփերի մէջ մի զառիվայրի վրայ, որի կողմերը բռնված էր չինականների անթերով երդիկներով լուսաւորուած։

Ըստ երեւոյթին գիւղը պիտի որ խնդճ լինի, գոնեա ոչինչ նշան չը կար բաւարար զրկութեան։ Երկար ժամանակ Պիպիս Մելիքեանց անուն հողատիրոջ համար աշխատելով հողերի ծանր վարձը տատուցանելու, գիւղացոց համար հասկանալի բան է, որ դժուար էր հարստութիւն ձեռք բերելը,—բայց որովհետև մշակ մարդու համար աշխատութիւնը կենաց խնդիր է ամբա գտա բային կալուածատիրոջ դէմ. այժմ վէճը աւարտած է յաղթած գիւղացոց և յաւտիկ է որ գիւղն այժմն իր զրկանքների մէջ վերջինը չի լինի։ Հայ մշակը քրտինք թափելում վարժուած է, և աշխատութիւնը՝ լինի նա ամենահամար և ստժանակիր, նորա համար բաւականութիւն է. և այս է պատճառը, որ ամեն տեղ ուր որ հայն ի'երեխայ Թիֆլիսից կամ Ծղնկերից և կամ եթէ երեխան հիւանդ է—միտուած է վրացի քահանան։ Ամբողջ մեծ պաղը ժողովուրդը ժամերգութիւն լսած չէ։ Պարզ է, որ այսպիսի վիճակի մէջ մէկ կողմից ժողովուրդը սառչում է դէպի իւր քրիստոնէական պարտականութիւնքը, բարոյապէս վատթարանում է, միւս կողմից օր աւուր աւելի խորթանում է պղգութեան և յարվում օտարին, որովհետև այդ օտարախօս հայերը միայն եկեղեցիով են իրանց պղգութիւնը ճանաչում։ Սա ցաւալի երեւոյթիւն է, որ անշուշտ շատ տեղերումն է կրկնվում և այն լո՛կ տեղական հոգևոր իշխանաւորի պատճառով։

Մի տեղ աւելորդ քահանայք լի են, միւս տեղում անհրաժեշտը չը կայ. սա վարչութեան անհոգութիւն է անկանոնաւորութիւն է։

Մի՞թէ չէր կարելի գէթ առժամանակ Թիֆլիսի քահանաներից մէկին խնդրել հովանալու այն անհոգին և կիսամոլոր ժողովուրդը, մինչև իր ձեռնադրվելը պիտի քահանայացուն։

Թիֆլիսում շատկան, կարծում ենք, աւելորդ քահանայք, որոնց աւելի ձեռնտու է ութսուն տուն գիւղացի ժողովուրդ հովանալ, որ գէթ նորա ընտանեաց սիրտ-ջը կը հոգար, քան պարապ, անժողովուրդ մնալ Թիֆլիսում։

Կը յուսանք, որ ուշք կը դարձնէ հոգևոր իշխանութիւնն այս հանգամանքի վերայ։ Ամօթ է, որ ներկայումն էլ առիթ տըրվի տգէտ ժողովրդեան անընդդիմաբար կորչելու ապդութեան համար։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Վ Ա Ն

22 մարտի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Ամեն մարդ անհամբեր սրտով սպասում էր գարնան գալստեան, որովհետև ընդհանուր համգումար մը գոյացած էր ժողովրդեան շրջանում թէ անպատճառ այն տարին յուսացած և խոստացեալ բարենորոգումնք Հայաստանում կ'սկսին իրագործվիլ. որոնք մարքին կ'անցնէր թէ ընդհակառակը երբ ձեան կոյտերը հալչին, երբ ծառերը կրկին տերև առնէին և ճանապարհները բացուէին, նորանոր հարատահարութիւնք զրկանք և չարիք պիտի թափէին տարաբաղդ հայոյն գլխուն։ և ահա ինչ որ տակէ երիք կամ չորս ամիս առաջ ոչ ոքի մարքին կ'անցնէր, այսօր գառն իրողութիւն մ'է վաստ թայ կը բնակի, այնտեղը փոքր ժամանակում աճում ծաղկում է և գարմանալի կենդանութիւն է ստանում։ Մեր մշչակները կատարեալ մնդուներ են—և այս յայտնի է, որ ուր մի անգամ հայն ոտն է դրել։ Բայց ախտս որ նոքա իւրեանց փիթաչներբը չ'ինում են, պատմական հանգամանքներից զրկուած, ոչ թէ իրենց պաշտելի Հայաստանի հողում, այլ ուրիշ և օտար տեղ Բոսփորի մօտ կամ հիւսիսային քաղաքներում ի վնաս հայոց աչխարհին և նորա անուան։ Մնում է պարծենալ փչրեալ աւերակներով և որ խայտառակելի է՝ նրանով բաւականանալ։

Մէլիքի գիւղի և կոնչէնի տարածութեան մէջ հետեւեալ հայոց գիւղեր կան. Սը ա ի դ ի ւ ղ կամ Կլիդքեանդ՝ վերին և ներքին, որ միմեանցից մի ¼ վերստ հեռաւորութեան վրայ են։ Ջորեքկողմի մարկոթինը և հողի անբերրութիւնը ստիպում է գիւղացոց իրենց ապրուստ հայթայթելու՝ այլ և այլ մշակութիւնով պարապել։ Սորանից փոքր ինչ հեռու կայ միւս հայոց գիւղ՝ Պ ի պ ի ղ։ Հողագործութիւնը և գլխաւոր պարապմունք է նոցա կեցութեան։ Սրբի գիւղի բարձրութիւնից երեում են հեռու ձորերի մէջ էլի երկու հայոց գիւղ՝ Բ ա ղ ա ն ի ս և Կ ո չ ի ս ա լ ա։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇՐՋԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Դ Ե Լ Ի Ջ Ա Ն Ի

ԱՆՏԱՌԱՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԵՂԵՐԻ

Ն Ո Խ Ճ Ի Ր

Փէթովէչ Պապաձանեանին.

Պրոֆեսորին Ս. Պետերբուրգի Կովկասեան համալսարանի).

(Շարունակութիւն *).

Ա Ջ ա Ջ ր ի ց դէպի հիւսիս, դրած է հայոց Ս և դ ի ւ ղ կամ Կարագաչ։ Դիրքը ձորի մէջ է, որովհետև աջ ու ձախ կանգնած են բարձրադիր հովիտներ պատուական տեսարաններով։ Այս մեծ գիւղը 145 տնով չափ հայերից բաղկացած՝ չունի ուսումնարան և երբէք չի ունեցել, բայց ներկայումս արդէն հինն են դրել ուսումնարան կառուցանելու և տուրա համար արդէն պատրաստութիւն են տեսել։ Բոլոր հասարակութիւնը լինքն է բանում. մէկը բերում է չինութեան ատաղձ, միւսը պատրաստում է կիր և ագուռ, երրորդը փորում է հինն և այլն։

*) Տես «Մեղու» № 49։

դելու, անկարող տեղական ժողովրդոյ սիրտ-քներին ի մօտոյ վերահասու լինելու և արդարութեամբ նորա պահանջներին բաւարարութիւն տալու։ Այս կէտից նայելով մեծ վնաս է եկեղեցական վարչութեան, վիճակաւորների և յաջորդների բացակայութիւնը վիճակներում, իսկ ժողովրդոյ վնասի մասին և՛ խօսք չէ կարող լինել։

Թիֆլիսից 20 վերստ հեռու է Մծխեթա գիւղն, ուր կայ կառուցած և հայ եկեղեցի գեղեցիկ, առատաձեռնութեամբ հանգուցեալ երջանկայիշատակ Յովսէփայ Էֆէնդեանց։

Այս գիւղի, նոյնպէս և մերձակայ մի քանի գիւղերի վիրաւոր հայ բնակիչներն, մօտ ութսուն տուն, երկու տարի է, որ մնացել են առանց քահանայի։ Լսում ենք, որ շատերը թաղվում են առանց քահանայի, շատ նորածիններբը մնում են առանց մկրտութեան մինչև մի հայ քահանայ կ'երթայ Թիֆլիսից կամ Ծղնկերից և կամ եթէ երեխան հիւանդ է—մկրտում է վրացի քահանան։ Ամբողջ մեծ պաղը ժողովուրդը ժամերգութիւն լսած չէ։ Պարզ է, որ այսպիսի վիճակի մէջ մէկ կողմից ժողովուրդը սառչում է դէպի իւր քրիստոնէական պարտականութիւնքը, բարոյապէս վատթարանում է, միւս կողմից օր աւուր աւելի խորթանում է պղգութեան և յարվում օտարին, որովհետև այդ օտարախօս հայերը միայն եկեղեցիով են իրանց պղգութիւնը ճանաչում։ Սա ցաւալի երեւոյթիւն է, որ անշուշտ շատ տեղերումն է կրկնվում և այն լո՛կ տեղական հոգևոր իշխանաւորի պատճառով։

Մի տեղ աւելորդ քահանայք լի են, միւս տեղում անհրաժեշտը չը կայ. սա վարչութեան անհոգութիւն է անկանոնաւորութիւն է։

Մի՞թէ չէր կարելի գէթ առժամանակ Թիֆլիսի քահանաներից մէկին խնդրել հովանալու այն անհոգին և կիսամոլոր ժողովուրդը, մինչև իր ձեռնադրվելը պիտի քահանայացուն։

Թիֆլիսում շատկան, կարծում ենք, աւելորդ քահանայք, որոնց աւելի ձեռնտու է ութսուն տուն գիւղացի ժողովուրդ հովանալ, որ գէթ նորա ընտանեաց սիրտ-ջը կը հոգար, քան պարապ, անժողովուրդ մնալ Թիֆլիսում։

Կը յուսանք, որ ուշք կը դարձնէ հոգևոր իշխանութիւնն այս հանգամանքի վերայ։ Ամօթ է, որ ներկայումն էլ առիթ տըրվի տգէտ ժողովրդեան անընդդիմաբար կորչելու ապդութեան համար։

ՊԵՏԱԿԱՆ ՀՍՆԳԱ

Ա. Հայրապետ

ՂՈՎՎԱՅ

25 ապրիլ.

(Թարգմանված «Վրաստանի Հայոց Տնեղ» ազգային լրագրից)

Ընդհանուր ակնարկ

Ամեն ազգ, որ ուզում է ապրել, պետք է ունենայ իր ներքին կազմակերպությունը, որ նրան ամրացնի, զարգացնի և ուղղորդի դեպի ապագան։

նամակիս և բարևհամբէք տպագրել նաև նուիրատուաց անունները:

Ց. Մուսինեանց 1 րուբլի 50 կոպէկ, Մ. Մուսինեանց 50 կ., Յ. Գալստեանց 1 ռ., Լ. Թարվերդեանց 50 կ., Ս. Թարվերդեանց 1 ռ., տ. Իակ. Գալստեանց 55 կ., Ց. Ցովհաննէսեանց 50 կ., Ա. Վիրաբեանց 20 կ., Վ. Տէր Աստուածատուրեանց 20 կ., Ոմն անյայտ 50 կ., Ոմն անյայտ 20 կ., Ա. Ազիզեանց 20 կ., Հ. Մալխասեանց 20 կ., Ա. Առաքելեանց 50 կ., Օ. Աւագեանց 50 կ., Յ. Ազիզեանց 50 կ., Գ. Ազիզեանց 15 կ., Ա. Ազիզեանց 40 կ., Յ. Աստուածատուրեանց 20 Մ. Վարդանեանց 1 ռ., տ. Ա. Պետրոսեանց 1 ռ., Ե. Ղարագաշեանց 50 կ., Ա. Տէրունեանց 10 կ., Գ. Ովակիմեան 20 կ.: Գումարն է 12 ռ.:

Վերջացնելով նամակս, խորին շնորհակալութիւն եմ յայտնում իմ առն այցելող այն պարոններին, ո՛րոնք անտես չառին իմ դէպի նրանց ուղղած խնդիրքն:

Ց. Մուսինեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԻՐԼԱՆԴԻԱՑՈՒՄ.

Դիլօնի կալանաւորութեան առթիւ՝ պարնելը իւր կուսակիցներին խորհուրդ է տուել, որ նրանք հրաժարուին իւրեանց նախկին պիտանութիւններից կալուածային օրինագծի (բիլլ) վերաբերութեամբ և երկրորդ ընթերցմանը քուէարկել նրա դէմ: Իրլանդական անդամները խորհրդական դահլիճում միասին են կազմում Դիլօնի կալանաւորութիւնը քննելու համար: Ապրիլի 22-ին (մայիսի 4-ին) վճռուել է խնդրել կառավարութիւնից, որ նա որքան կարելի է շուտ ժամանակում նշանակէ քննութեան վճռաբանութիւններ անելու Դիլօնի մասին կառավարութեան արած կարդադրութեան առթիւ: Եթէ կառավարութեան պատասխանը անբաւարար երևի՝ այն ժամանակ յանկարծ առաջարկութիւն անել պատառի նիստը յետաձգելու:

Վերջին ժամանակս Իրլանդիայում ջարագործութեանց քանակութիւնը բազմանում է: Կլինդլասում մի լճի մէջ են ձգել ցրուիչին, որ ցրվում է այն վճիռները, որոնք արտաքսում են կալաւառուներին իւրեանց միջակվող հողերից: Մի ագարակատիրոջ խորովել են կրակի վրայ: Դէրդրավում և Բալիբոանում գիշերները յարձակուել են ագարակատէրերի վրայ հրացաններով զինաւորված մարդիկ՝ պահանջելով նրանցից, որպէս զի նրանք անցնին կալուածային միութեան կողմը: Կլեկհնում մի կառապի խումբ 150 մարդուց բաղկացած երկար հալածել է կառավարչին և ուզեցել են նրան գետի մէջ խեղդել: Կանէմարում գիշերականները յարձակուել են մի կասբի վերայ, որի մէջ գնում էին ասպիսականները: Երբ այս վերջինները ձանձրանում են, նրանց հալածողները պատառել են ձիանների փորը: Ուրիշ դէպքերում էլ այդպիսի երևոյթներ են պատահել: (Indépend. Belge).

«Times»-ը իւր գարմանքը յայտնում է այն հանգամանքի առթիւ, որ չը նայելով գէնք կրելու արգելման օրինաց վերայ՝ դարձեալ ամբողջ վնասուորուած մարդկանց խմբերը թափառում են հարաւային և արևելեան իրլանդիայի բազմաթիւ տէրերում, որոնք մնում են ագարակների մէջ և վախեցնում են նրանց բնակիչներին ապառնալիքներով և բռնի գործողութիւններով: Բանը այն է, որ պարլամենտի այդ գործը գաւառի տեղը թուղթի վրայից է: Այդ գործը զանազանվում է ուրիշ գործերից, որոնք վերաբերվում են պատերազմական դրութեան նրանով, որ խուզարկութիւն անելուց առաջ գէնք գտնելու նպատակաւ ոստիկանութիւնը պարտաւոր է դուրլինում իշխանութեանց վճիռը խնդրել: Այդ ահմանափակումը, որ կալուածականի խնդիրը անց կացնելու ժամանակ ընկել է գործի մէջ՝ նրան շինել է աւելորդ և աննշան: Մինչև որ ոստիկանութիւնը դիմում է իշխանութեանց կարգադրութիւնների հարց ու փորձերի համար՝ արդէն գէնքը տեղափոխվում է դէպի մի անվտանգ տեղ:

Այն ժամանակից, ասում է «Nation» Zeitung» Բերլինի թերթը, երբ կայսերութեան կանցլերը յայտնեց, որ նա օգտա կը քաղէ այն մեծամասնութիւնից, որը հարկաւոր ժամանակումը ունի, նա դրանով ոչնչացրեց կանոնաւոր քաղաքական զարգացման ամէն կարելիութիւնը: Իշխան Բիզմարկը սիրով հանդիմանում է նրանց, որոնք իր առաջարկութիւններին հակառակում են, այն բանում, որ դրանց համոզմունքներին վնասվարում է կուսակցութեան ոգին և մասնաւոր շրջանների շահերը. իսկ իր գործունէութեանը այնպիսի էական չարժաւթիւններ է յատկացնում, որոնց գոյութիւնը չէ ընդունում նա իւր հակառակորդների մօտ: Այսպիսով ամեն մէկ առանձին կարծիքը սասանում է անձնական կուի կերպարանքը: Պարլամենտականութիւնը ունի իւր յատուկ պայմանները, նրանց պէտք է յարգել, նրանց վերայ հարկաւոր է ուշադրութիւն դարձնել: Նա, ով որ իրեն այնչափ ուժեղ է կարծում, որ կարողանայ հրաժարուել այդ տեսակ յարդանքից դէպի պարլամենտական ձևերը, կարող է կործանել նրանց, բայց նրանց վնասվարել և նրանցից օգուտ քաղել ընդհանուրի բարութեան համար — դրա համար նա անզօր է:

* * *

Վիէննայի կէս-պաշտօնական «Fremdenblatt» թերթը մանաւորապէս յիշում է, թէ Թիւրքիան և Յունաստանը սահմանի մասին վէճի զոյացուցիչ վճիռը պարտական են ամենից առաջ Դիսմանեային, նրա կայսեր և նրա կանցլերին:

* * *

Հոլանդիայի կառավարութիւնը իրաւունք է տուել արտարին գործերի պաշտօնեային Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի հետ միասին առաջարկելու իւր ծառայութիւնները Զիւիի, Պերուի և Բոլիվիայի հաւարակապետութիւններին, կառավարութիւնը յուսով է, որ այս աէրութիւնների հաւաքական միջամտութեամբ կը յաջողուի վերջ տալ այն պատերազմին, որ այնչափ չարիքներ է պատճառում հարաւային Ամերիկային:

* * *

Պետերբուրգից հաղորդում են, որ Կովկասի փոխարքան հեռանալով իւր պաշտօնից փոխարքայութեան փոխարէն նշանակում է Կովկասի վերայ ընդհանուր հրամանատար:

Պարոից գնացքը իջևանում է օգնութիւն փնտրելի վրայ:

* * *

«Politik» թերթը գրում է, որ բարձն Օռաչիլլը և վիէննայի վարկի հիմնարկութիւնը, ազգային բանկը և գաշնակցութեան բանկը սասցել են կարմիր խաչաքով գրած և «գործադիր մասնաժողով ամսագրական գիւղացիների գաշնակցութիւն» ստորագրութեամբ նամակներ, որոնց մէջ նրանց հաղորդում են, որ նրանց անունը սխալ է պայմեն: Ոստիկանութիւնը գաղտնի կերպով զննից հիմնարկութեան չէնքումը և գլխաւոր սանդուղքի վերայ, երկու սիւների մէջ գտաւ մի ցիլինդր, վրը պայթող նիւթերով: Գործի քննութիւնը սկսուել է:

«ՄԵՂՈՒ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6-ին մայիսի: Մայիսի 4-ին Եկատերինեան չրանգքից քարեայ կամրջի մօտ հանեցին երկու գուտապերչայի բարձեր, լիքը սև դինամիտով 126 ֆունտ ծանրութեամբ, որոնք ոչ հոսակիր ունէին և ոչ էլ լոցաճեղք: Երեկ Ղարագաղի պատգամաւորութիւնը ի Տէր հանդուցեալ Թագաւորի դերեզմանի վերայ դրեց արծաթեայ պսակ: Երեկ սրտաբոյ կարդի պարսկական դեսպանութիւնը ստացաւ ուսական նշանները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6-ին մայիսի: Հրատարակած է ներքին գործոց նախարար կոմս Լոնատեվի շրջաբերականը նահանգապետներին, որ յայտնում է, թէ կառավարութեան չանքերն ամենից առաջ ի գործ կը դնվին չընչելու համար գաւազրութիւնքը, կենդանի և անընդհատ գործակցութեամբ երկրի հասարակական զօրութեան, որի համար կառավարութիւնը կը տայ կարևոր միջոցներ: Ազնուականաց, գիւղական վարչութեանց, քաղաքացեաց դասակարգի իրաւունքները կը մնան անձեռնմխելի, գիւղականք կ'ստանան իրանց ծանրութեանց հնարաւոր թեթևութիւն, հասարակական կազմակերպութեան և տնտեսական վիճակի բարեկարգութիւն:

Կ. ՊՕԼԻՍ, 5-ին մայիսի: Սուլթան Աբդուլ Ազիզի սպանութեան քննութիւնը դոյց տուեց և Միզհատ փաշայի մասնակցութիւնը. նա թագնվեցաւ Իզմիրի Ֆրանսական հիւպատոսարանում: Միզհատ փաշան արձակված է պաշտօնից և նրան յաջորդ նշանակել է Ալի փաշան: Դատաստանական յանձնաժողով խրկած է Զմիւռնիա Միհհատ փաշային վտարելու համար:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲԻՐԺԱ.
5-ին մայիսի.

Աբք. բանկ. 1-ին	96	75
— — 2-րդ	94	25
— — 3-րդ	94	50
— — 4-րդ	94	—
վիճակահ. 1-ին	222	75
— — 2-րդ	215	50
Արև. փոխառ. 1-ին	92	62
» » 2-րդ	92	87
» » 3-րդ	92	87
Լոնդոն	24	25
Բերլին	108	50
Համբուրգ	123	—
Փարիզ	256	25
Ոսկի	8 ռ.	5 կ.

Բիրժայի վիճակը թոյլ է:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Սրբազան Գրիգոր եպիսկոպոս Ազաթիրեանցը հեռագրով կանչվել էր Էջմիածին: Այժմ վերադարձել է և, ինչպէս լսում ենք, գնալու է Ռուսաստանի մայր քաղաքները, գուցէ և արտասահման Գէորգեան ճեմարանի մասնագիտական բարձր դասատուից համար ուսուցիչներ հրաւիրելու համար:

* * *

Ջարմանք է պատճառում վերջին «տաքսան» քաղաքային վարչութեան, հայի գլխը բարձրացրած է անցեալի հետ համեմատելով, մինչդեռ մեզ թուում է աւելի առատ է և համեմատելով աւելի արժան:

* * *

ՋԱՒԱԹԱԼԻՑ «Կովկաս» լրագրին հաղորդում են, որ ապրիլի 26-ին Բելական գիւղում սպանվումին Ջաքամալի գաւառապետ փոխ-գնդապետ Սկրաֆիմովիչն և ասաղ երկրաչափ կապիտան Սօկոլցովը:

Բելականի գաւառակի կառավարիչ Գէորգի-բէգ Գալաչևը իւր ոգոց և ազգականների մկրտութեան առթիւ բազմաթիւ հիւրեր է հրաւիրում Ջաքամալից և Լագօդեխից: Սոցա թիւումն են լինում և վերոյիշեալները: Մկրտութեան խորհուրդը կատարելից յետ նախաճաշիկ են անում և 2 ժամին ճաշ են սկսում, որ տևում է մինչև 5 ժամը և չատ ուրախ անցնում է: Մի կողմից զինուորական երաժշտութիւնն է ինդպիտնում օղը, միւս կողմում տեղական զուռնան:

Ճաշից յետ ոմանք նստած սեղանի մօտ չարունակում են խմել, կանայք և երեխայք վեր են կենում և մի կողմում (ճաշը բացօթեայ է լինում) սարքում են պար:

Այս միջոցին, ժամը 7-ին տանտիրոջ ազգական Ազեքսանդր Գալաչևի (Քարա-Աբդուլլա) և կապիտան Սօկոլցովի մէջ ծագում է վէճ և առաջինը զարկնում է Սօկոլցովի փորն, որ իսկոյն վախճանում է: Գալաչևը նոյն րոպէին մօտենում է սեղանին, որի մօտ նստած է լինում գաւառապետն և սրան էլ ըսպանում է: Բարձրանում է չիսթի և աղմուկ. ապատած կանայք և երեխայք փախչում են, չատերը ոտով մինչև Ջաքամալ են վազում ահից: Զարապտրծը կալանաւորած է, իսկ սպանածների թաղումն տեղի է ունենում ապրիլի 29-ին Ջաքամալում:

* * *

ՀԱՆԴԱՄԻՋԻՑ մեզ գրում են.—Ահա Թուրքերի մշևանգութեան մի օրինակ.

Ջատկից մի քանի օր առաջ Հանդամիջում բնակվող օսմանեան Սարգիս անունով մի խեղճ մարդ գնում է նրասխի ափերը ձուկ բռնելու, իւր հետը տանում է և իւր 12 տարեկան որդուն Նիկողայոս անունով: Գործը վերջացնելուց յետոյ երբ ուզում է վերադառնալ՝ գալիս է Մշիվան Թուրքարնակ գիւղը, որ պատկանում է մի քանի Թուրք բէյերի, անտառում է իւր որդին հետը չէ, չատ որոնելուց յետոյ գտնում է նորան մղկիթում մօլլանկոչից չրջապատուած, որոնք սովորեցնում են նորան իրանց ձևով ծունկ չոքել: Հայրը այդ տեսնելով կատաղում է, ուզում է մօտենալ որդուն, բայց բէյերը հրացանները վերցնելով սպառնում են նորան խփել եթէ կը համարձակուի մօտենալ Ալլահի աշակերտ դառնոպին: Խեղճ հայրը անճարացած թողնելով որդուն գալիս է գիւղը: Նիկողայոսին արդէն Թուրք են դարձրել և անունը դրել են Ավդուլահ: Գիտենք ինչ կը լինի այսպիսի բռնաբութեան վերջը:

—Գարունը այստեղ չատ ցրտային է անցում, համարեա միչտ անձրև է գալիս. Թէղ չ'ասեն Թէ օրացոյցները սխալվում են. ինչպէս երևում է այս տարի չատ առատ պէտք է լինին հունձերը:

* * *

Ղզլարից գրում են, որ ամսոյս 27-ին պէտք է ներկայացնեն «Գալալ Գաղթ» և «Խամթարալա»: Դերերը բաժանած են այնպիսի անձանց, որոնք ծանօթ են թիֆլիզի կեանքին, ուստի և յուսալի է որ ներկայացումն լաւ գնայ:

Ներկայացումն բարեգործական նպատակով է:

* * *

Ղզլարից մեզ գրում են, որ զատկի օրերին մի ռուս և մի հայ քահանայ ձու են խաղում, պայմանով, որ ումի ձուն կոտրվի մի րուբլի տասուցանէ միւսին: Հայ քահանայի ձուն կոտրվում է: Նա գրպանից հանում է քարեայ ձու և կոտրում է ռուս քահանայի ձուն: Վերջինը տեսնելով այս խարդախութիւնն, երկու թերթաչ ձու տալիս է հայ քահանայի դլխին: Այսպիսի զուարճութեամբ և հանդարտ անցնում են մեր հայրերն իրանց ժամանակ, չօրինակ քարի իւրեանց հօտերին:

ԹԱՒՌ ԼՈՒՐԵՐ

«Нетербъ. Газета»-ն ոստիկանական չուտափութեան վերաբերմամբ յառաջ է բերում հետևեալ նոր տեսարանը, որ օրերումս տեղի է ունեցել մայրաքաղաքի դատաւորների մէնի մօտ: Ոստիկանութիւնը դատի է քաչում մի ոմն Պիմէնովի:

Դատի ներկայացրած Պիմէնովը առաջին պարտքն է համարում հարցնել դատաւորից.

—Պարոն հաչտարար դատաւոր, ասացէք խնդրեմ, որովհետ է գանվում իմ պօրտվէյնի խանութը:

Դատաւոր. Այդ բանը դուք աւելի լաւ կ'իմանաք քան Թէ ես:

Պիմէնով. Բայց ես ինչպէս իմանամ այն բանը, ինչ որ գոյութիւն չ'ունի:

Դատաւոր. Խնդրեմ, ձեր միտքը յայտնեցէք:

Պրիմէնով (դատաւորին). Պարոն դատաւոր, ես երբէք պօրտվէյնի խանութի ծունեցած չեմ: Ես նստած էի մի պօրտվէյնի խանութում և գարեջուր էի խմում, երբ որ պատահեցաւ անկարգութիւնը: Եկաւ ոստիկանութիւնը. ձևակերպութիւնը կազմել. որովհետև խանութի տիրոջ. նա տանը չէր: Գիմում են ինձ. «Դուս ով ևա» «Պիմէնով», ասում եմ: «Դուս այստեղ ինչ ես չինում», «Գարեջուր եմ խմում»: «Սրան էլ արձանագրութեան մէջ դցեցէք»: Ինձ էլ գրում են արձանագրութեան մէջ և սխալմամբ փոխանակ հիւրի՝ ինձ արձանագրել են իբրև պօրտվէյնի խանութի տէրը և դատաստանի են քաչել, որ թոյլ եմ տուել այն անկարգութիւնը իմ կրպակիս մէջ, որ ես ոչ մի ժամանակ ունեցած չեմ:

Դատաւոր (ոստիկանական թաղապահին). Այդ ինչպէս է պատահել:

Ոստիկան. Երևի Թէ մի փոքրիկ սխալմունք է դուրս եկել:

Ահա քեզ մի լաւ տեսարան. բայց որքան են պատահում այսպիսի դէպքեր ի չնորհս ոստիկանութեան:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԼՆՖԻԱՋԵԱՆՑ.

ՏԱՀԱՐԴԱՎԱՃԱՌԱԿԱՆ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Աճուրդի 15-ից մինչև յոյն ցնդի մինչև ապրիլի 30-ը։

ՀԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1. Ընդհանուր տարեկան ժողովում ներկայացուցիչների 40%
2. Ընդհանուր ժողովի որոշումները ստորագրելու համար 40%
3. Ընդհանուր ժողովի որոշումները ստորագրելու համար 40%
4. Ներկայացուցիչների ժողովում ներկայացուցիչների 40%

Ցանկացողները կարող են ծանոթանալ ընկերության գրասենյակում ամեն օր 9-ից մինչև 3 ժամը ցերեկը։

Ընկերության վարչության նախագահ՝ Վ. Վարդապետյան։

ՀԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ընկերության ընդհանուր ժողովը կայանալու է ապրիլի 30-ին, կիրակի օրը, ժամը 2-ին, ընկերության գրասենյակում։

Օրակարգ՝
1. Տարեկան հաշվետվության հաստատում։
2. Ընկերության կանոնադրության փոփոխություն։
3. Ընկերության վարչության ընտրություն։

Ընկերության նախագահ՝ Ա. Ղազար